

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր լրացավ Վեհափառ Հայրապետի ծննդեան 70-ամյակը: Այս ուրախ առիթով, առավոտյան, աշխատանքից առաջ, Մայր Աթոռի աշխատավորությունը Վեհարանում շնորհավորեց Նորին Սուրբ Օծության ծննդեան տարեդարձը:

Հանուն աշխատավորության խոսք առավ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և ասաց, որ այս օրը Մայր Աթոռի միաբանության և աշխատավորության համար կրկնակի ուրախության և ազգային հպարտության օր է, որովհետև Հայոց Հայրապետը Իր ծննդյան 70-ամյակի առիթով և հանուն խաղաղության պաշտպանության Իր կատարած բեղուն գործունեության համար սեպտեմբերի 19-ի Կենտրոնական կառավարության հրամանագրով պարգևատրվել է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով:

Այս ուրախ առիթով Ա. Հատիտյանը ջերմորեն շնորհավորեց Հայոց Հայրապետին և սրտագին բարեմաղթություններ արեց Նրա կյանքի արևշատության համար՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի բարօրություն հայրենյաց և ի մխիթարություն հայ ժողովրդի, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

Նույն օրը, ավելի ուշ, հոգևոր ճեմարանի ուսանողությունը նույնպես աջահամբույրով շնորհավորեց Վեհարանում Հայոց Հայրապետի 70-ամյակը՝ Նրան մատուցելով 70 բուրումնավետ վարդերից կազմված մի փունջ:

Երեկոյան Մայր Աթոռի միաբանությունը ևս որդիական երախտագիտությամբ շնորհավորեց իր հոգևոր Հոր ծննդյան 70-ամյակը՝ Նորին Սրբությանը նվիրելով գեղեցիկ բյուրեղապակյա մի ընտիր ծաղկաման:

*
* *

Սեպտեմբերի 26-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց Մոսկվայում Հունաստանի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Կալոգերասը՝ իր հարգելի տիկնոջ հետ: Հայոց Հայրապետի և մեծահարգ դեսպանի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին մասնակցեցին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և Լոնդոնից՝ տ. Պսակ արքեպ. Թումայանը:

*
* *

Սեպտեմբերի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց այցելությունը անվանի գրող Մարիետա Շահինյանի, որը եկել էր շնորհավորելու Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակը և «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով պարգևատրվելը:

*
* *

Հոկտեմբերի 8-ին, կիրակի.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց Կ. Պոլսից ս. Էջմիածին ժամանած ուխտավորների մի մեծ խումբ: Այդ ընդունելության ընթացքին պոլսահայերից խոսք առավ տիկին Սոնա Թենկրյանը և հանուն բարեպաշտ ուխտավորների ընթերցեց հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տեր,

Այսօր, լուրջ և հանդիսավոր այս պահում, մենք՝ խումբ մը իսթանպուլահայեր, պատիվ կզգանք գտնվելով Ձեր բարձր ներկայության, ու բերելով մեր շատ համեստ, այլ նույնքան սրտաբուխ խանդավառությամբ զեղուն մասնակցությունը Ձեր ծննդյան յոթանասուներորդ և գահակալության քսաներեքերորդ զույգ այս տոներուն, որոնք մերիններուն նման կբոցավառեն բովանդակ ժողովուրդի մը սիրտն ալ, հոգիին հետ:

Անկեղծ է այդ ժողովուրդը իր զգացումներով, խո՛րապես: Ցրված աշխարհի ամեն կողմ, խեղճ տնակի մը կամ շքեղ ապարանքներու մեջ, հարգալիր ու հավատարիմ միշտ ավանդապահորեն, պապենական գեղեցիկ ժառանգականությամբ, հանդեպ այն Անձին, որ մականը գործածեց կախարդական ցուպ մը իբրև, ունեցավ սիրտ մը, մե՛ծ սիրտ մը, բեղուն մտքի մը առընթեր, սիրով, գորովանքո՛վ հակեցավ վտարանդի իր հոտին ու անոր ցավերուն վրա, և որ հաջողեցավ լի՛ովին կատարել վսեմ իր առաքելությունը՝ այնքան զգայնորեն գիտակից:

Ու այս առաքելությունը կշարունակվի արժանավորապես, շրջանի մը մանավանդ, երբ եկեղեցական որևէ պարտականություն կամ միջամտություն, տիրող մտայնություններու և հոգեկան տագնապներու հետևանք, կրնար բաղձալի չնկատվիլ հիմնովին:

Գուրգուրացիք, իբր մասունքի մը, հողին տակ պահված քարի կտորին՝ հնադարյան բեկոր մը սրբավայրե մը մնացած, ու հավատացիք թե այդ ավերակներու վերանորոգման հետ պիտի նորոգվին նաև հոգիները՝ շատոնց որբացած:

Դո՛ւք էիք, որ իբր ճշմարիտ կրոնապետ և ընտիր մտավորական, Ձեր ուղիղ դատումներով ու համամարդկային զգացումներով հմայեցիք օտար ազգերն իսկ և զոդեցիք մեր սիրտերը, հուզիչ եղբայրությամբ, առիթ տալով յուրաքանչյուր հայու, որ անդրադառնա, թե տակավին չցամքած հուլներ կթրթռան իր էութենեն ներս՝ բաբախուն կուրծքին ներքև, որ, վերջապես, գոյություն ունի ս. Էջմիածին մը, եկած հեռավոր դարերու խորեն, եկած խունկի ծուխով և բույրով օծուն, իբր սրբազան կոթող հոգեկան թե բարոյական նվիրականություններու:

Թելադրեցիք հայրաբար ու ներշնչեցիք ժողովուրդը դեպի իրարհասկացողություն և միաբանություն հրավիրելով զայն, գորովագութ արտահայտությամբն ու պայծառ ժպիտովը Ձեր պատկառելի դեմքին, զոր անգամ մը տեսնողը այլևս պիտի չմոռնար: Ինչպե՛ս չմոռցա ես ալ:

Ու չմոռցա նաև տարիներ առաջ Վեհամոր ցավը՝ մոր ցավը, զոր հայտներ էր խոսակցի մը, իր անդարձ մեկնումեն միջոց մը առաջ, մտերիմ մեկ պահուն. «Դեռ երիտասա՛րդ է զավակս. ինչո՞ւ... ինչո՞ւ այսքան կանուխ ճերմկեին մազերը...»:

Այո՛, ինչո՞ւ...

Ինչպե՛ս չըլլար սակայն. ինչպե՛ս չըկազմվեր այդ լուսապսակը վաստակաբեկ ճակտին վերև Հոր մը՝ իր նահապետական ընտանիքի ծանր հոգերովը բեռնավոր՝ տակավին երիտասա՛րդ արդարև...

Մեզի համար անմոռանալի այս հանդիսության, մինչ բազմաթիվ կրոնավորներու կարգին՝ կվայելենք նաև ներկայությունը մեր սիրելի սրբազան պատրիարք հոր՝ Շնորհք արքեպ. Գալուստյանի, որ գիտցավ հսկել իր հոտին զորեղ կամքով, այլ իրեն հատուկ քաղցր խոհականությամբ, ու հարգվեցավ թուրք պետական ավագանիեն թե ժողովուրդեն, հավասարապես, կհուսամ անկեղծ թարգմանը ըլլալ շուրջիններուս և իմ սրտաբուխ ցանկություններուն, ուղղ-

ված Ձերդ Վեհափառության, Ձեր տարեդարձներու կրկնակ տոներուն առթիվ: Քիչեր միայն իրենց կենդանությանը արժանացան միահամուռ սիրո՝ գուրգուրանքի՝ այնքան. և Դուք այդ բացառիկներեն մեկը եղաք: Երջանիկ ենք ու հպա՛րտ՝ ըլլալով ժամանակակիցը այդ մեծ Անձնավորության, որու անունը գնահատությամբ պիտի արձանագրե եկեղեցական պատմությունը, և զոր բովանդակ ժողովուրդ մը պիտի քանդակե իր սրտին խորը, երախտագիտորեն՝ հավատարմաբար:

Որդիական ամենախոր հարգանքներով՝

ՍՈՆԱ Ն. ԹՆԿՐՅԱՆ

Իսթանպոլ,
8 հոկտեմբերի 1978 թ.

*
* *

Հոկտեմբերի 10-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Ժողովին հրավիրված էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Թուրքիայի հայոց տ. Շնորհք սրբազան պատրիարքը, որին ջերմորեն ողջունեց Վեհափառ Հայրապետը:

Նորին սրբազնությունը, խոսք առնելով, շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին, որ ներկա է լինում Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստին, և ապա համառոտակի տեղեկություններ հաղորդեց ստամբուլահայ եկեղեցիների և համայնքների եկեղեցական, կրթական և մշակութային գործունեության մասին:

Տ. Շնորհք սրբազան պատրիարքը իր պատասխան խոսքում նշեց նաև, որ իր այցելությունը Մայր Աթոռ միշտ գոտեպնդում, նոր ուժ է ներշնչում՝ շարունակելու համար իր պատասխանատու գործունեությունը որպես Թուրքիայի հայոց պատրիարքի:

Սրբազան պատրիարք հայրը կրկին անգամ հավաստեց, որ Թուրքիայում ապրող հայությունը հավատարմորեն կապված է Մայր Աթոռին և նրա արժանավոր Գահակալին և պիտի շարունակի մնալ միշտ հարազատ ու հավատարիմ զավակը ս. Էջմիածնի՝ անվերապահորեն կապված իր նախնիների սուրբ հավատքին և եկեղեցական ավանդություններին:

Այնուհետև Հայոց Հայրապետը ողջունեց նաև Գերագույն հոգևոր խորհրդում ներկայությունը տ. Սերովբե և տ. Շահե արքեպիսկոպոսների, որպես անդամների Գերագույն հոգևոր խորհրդի:

Տ. Սերովբե և տ. Շահե սրբազանները պատասխան խոսքով շնորհակալություն հայտնեցին Հայոց Հայրապետին՝ Նրա ողջույնի ջերմ խոսքերի համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում մասնավոր ուրախությամբ ողջունեց նաև ներկայությունը տ. Սիոն արքեպ. Մանուկյանի, որը վերջերս, Նորին Սուրբ Օծության հրավերով, վերջնականապես տեղափոխվել էր Միացյալ Նահանգներից Մայր Աթոռ, այնտեղ աշխատելու և գործելու համար:

Հայոց Հայրապետը շեշտեց, որ տ. Սիոն արքեպիսկոպոսը իր վաստակով և եկեղեցական-կրթական գործունեությամբ հարմար և անհրաժեշտ հոգևորականն էր, որին պետք ուներ Ինքը:

Վեհափառ Հայրապետը հատենի ժողովո հայտնեց, որ ինքը հրավիրել է Նորին սրբազնությանը որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և նշանակել ատենապետ նույն ժողովի:

Գերագույն հոգևոր խորհրդի անդամները երախտագիտությամբ ընդունեցին Հայոց Հայրապետի այս որոշումը:

Տ. Սիոն արքեպիսկոպոսը, խոսք առնելով, շնորհակալություն և երախտագիտություն հայտնեց Հայոց Հայրապետին և Գերագույն հոգևոր խորհրդի անդամներին՝ արտահայտված գեղեցիկ խոսքերի համար, և հավաստիացրեց, որ ինքը սիրով և նվիրումով կկատարի Հայոց Հայրապետի կողմից իր վրա դրված նոր պարտականությունները:

Տ. Սիոն արքեպիսկոպոսը Մայր Աթոռին ի նպաստ կատարել է 15.000 դոլլարի նվիրատվություն:

*
* *

Հոկտեմբերի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում կայացավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում խոսք առավ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ տ. Ներսես վրդ. Տեր-Ներսեսյանը և ներկայացրեց Վենետիկի Մխիթարյան վանքի վանական ներքին կանոնադրությունը:

*
* *

Հոկտեմբերի 18-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց հյուրաբար Երևանում գտնվող Տաջիկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախա-

գահ մեծահարգ Խոլով Մախմեջյանը՝ իր ուղեկիցներով:

Հայոց Հայրապետի և Տաջիկստանի մեծահարգ նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց:

*
* *

Հոկտեմբերի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը ու քարոզեց՝ «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս Անեղին» Թարգմանչաց նվիրված շարականի բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ 1915-ի Հաճնի հերոսամարտում զոհված մարտիկների հիշատակին:

*
* *

Հոկտեմբերի 16-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, որը Երևանում էր գտնվում Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար:

Հայոց Հայրապետի և մեծանուն մարշալի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ արտագին մթնոլորտում:

Զրույցի ընթացքում մարշալ Հովհաննես Բաղրամյանը շնորհավորեց Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակը և «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով պարգևատրվելը:

*
* *

Հոկտեմբերի 21-ին, շաբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը բելգրութահայ երկու ծանոթ հասարակական գործիչների՝ պրոֆ. Բարունակ Թովմասյանի և «Արարատ» օրաթերթի խմբագիր Ժիրայր Նաիրիի, որոնք եկել էին Հայոց Հայրապետին տեղյակ պահելու Բելգրութում վերջին տխուր իրադարձությունների պատճառով հայ ժողովրդի ենթարկված տնտեսական ծանր կացության և կատարված մարդկային կորուստների մասին: Հայոց Հայրապետը վշտով լսեց այդ բոլորի մասին և անմիջական պատրաստակամություն հայտնեց նյութական շտապ օգնություն հասցնել Բելգրութի հայ աղետյալներին:

Այս առթիվ Ամենայն Հայոց Հայրապետը Մայր Աթոռի միջոցներից 30 հազար ամերիկյան դոլլարի նյութական օգնություն ուղարկեց Բելգրութ և որոշեց հայրապետական մի կոչով համազգային մի նոր հանգանակություն ձեռնարկել՝ օգնելու համար լիբանանահայ աղետյալների նյութական ու կրթական կարիքներին:

*
* *

Հոկտեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալփաքյանը և քարոզեց «Բանին կենաց կանուխ քարոզ և աւետարանիչ, երգ փրկութեան հնչումն աճաւոր», շարականի բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Հայոց Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 28-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան, Վեհարանում Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը Մոսկվայում արտաքին գործոց մինիստրությունում հավատարմագրված արտասահմանյան 32 երկրների թղթակիցների: Վեհափառ Հայրապետի և թղթակիցների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որի ընթացքում Հայոց Հայրապետը պատասխանեց նաև նրանց հետաքրքրող բազում հարցերին:

*
* *

Հոկտեմբերի 29-ին, կիրակի.—Գիտ Խաչի.

Այսօր Մայր տաճարում պատարագեց տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը և քարոզեց Խաչի խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետին այցելեց տիեզերագնաց-օդաչու, Սովետական Միության հերոս Լեոնովը: Հայոց Հայրապետը ջերմորեն ընդունեց և հետաքրքիր զրույց ունեցավ տիեզերագնաց-օդաչուի հետ:

*
* *

Հոկտեմբերի 30-ին, երկուշաբթի.—Այսօր Հայոց Հայրապետը ընդունեց այցելությունը Մոսկվայում Անգլիայի արտակարգ և

լիազոր դեսպանի առաջին տեղակալ Ռոբերտ Ուեյդ-Գերրիի և նրա հարգելի տիկնոջ:

Հայոց Հայրապետի և հարգելի հյուրի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ վերջերս Նորին Սուրբ Օծության Լոնդոն կատարած հովվապետական այցելության, ինչպես նաև հայ և անգլիկան եկեղեցական և մշակութային հարաբերությունների մասին:

*
* *

Նոյեմբերի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբանների հերթական հավաքույթը՝ Վեհափառ Հայրապետի ներկայությամբ:

Հավաքույթի ընթացքին խոսք առավ Ստեփանոս սարկավագը, որը հանգամանորեն ներկայացրեց հույն եկեղեցու վարդապետ Պապանտրեուի վերջերս գրած դոկտորական աշխատանքը, որը կոչվում է «Հայ եկեղեցու ծագումը և կազմակերպությունը»:

*
* *

Նոյեմբերի 3-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Նոյեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում պատարագեց տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և քարոզեց՝ «Հա՜յր, թո՛ղ դոցա՝ զի ոչ գիտեն զինչ գործեն» (Ղուկաս ԻԳ. 34) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նոյեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Մայր Աթոռ ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակությունը:

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակությանը դիմավորեցին տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը և տ. Բյուզանդ սրկ. Գալայջյանը:

*
* *

Նոյեմբերի 9-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում կայացավ միաբանական հերթական հավաքույթը, որի ընթացքում խոսք առավ Մեծի Տանն Կիլիկիո պատգամավորության անդամ և Անթիլիասի դպրեվանքի տեսուչ տ. Տաթև եպս. Սարգիսյանը և խոսեց վերջերս Բեյրութում տեղի ունեցած իրադարձությունների մասին, որոնց պատճառով մարդկային և նյութական ծանր կորուստների էր մատնվել լիբանանահայությունը: Սրբազանի զեկուցումը լսվեց հուզումով և վշտով:

Զեկուցմանը ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նոյեմբերի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը:

*
* *

Նոյեմբերի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում կայացավ միաբանական հերթական հավաքույթը: Հավաքույթի ընթացքում խոսք առավ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, որը խոսեց Վեհարանում նոյեմբերի 9—11 օրերին Մայր Աթոռի ներկայացուցիչների և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատգամավորների խորհրդակցական հանդիպումների մասին, որոնց նպատակն էր համազգային հանգանակությամբ և Ամենայն Հայոց Հայրապետի բարձր հովանավորությամբ կազմակերպել Լիբանանի հայ աղետյալների օգնության գործը:

Այնուհետև տ. Մասիս վրդ. Գալստյանը խոսեց վերջերս Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի անդամ, ակադեմիկոս Բունիաթովի մեկ հոդվածի մասին, որտեղ ոչ ճիշտ տեղեկություններ էին հաղորդված հայ ժողովրդի պատմության և հայ մշակույթի մասին: Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի դիրեկտոր, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի գլխավորությամբ երեք հայ գիտնականներ հանգամանորեն պատասխանել են ակադեմիկոս Բունիաթովի հոդվածին, պատմական ճշգրիտ փաստերի հիման վրա:

*
* *

Նոյեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում պատարագեց տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և քարոզեց «Զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ» (Ղուկ. Թ 48) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական նիստը, որին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

Հավաքույթին խոսք առավ Բուենոս Այրեսից վերջերս ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանած Մայր Աթոռի միաբան Հովհաննես սրկ. Գրվրգյանը, որը ութ տարիներից ի վեր ծառայում էր տեղի հայ համայնքում որպես սարկավագ և կրթական մշակ: Բարեշնորհ սարկավագը հանգամանորեն ներկայացրեց Հարավային Ամերիկայի և հատկապես Արգենտինայի հայ գաղութի ազգային, եկեղեցական, կրթական կյանքը և պատասխանեց ներկաներից ոմանց հարցերին:

*
* *

Նոյեմբերի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում պատարագեց տ. Արսեն եպս. Բերբերյանը և քարոզեց՝ «Այլ մեք առ սէրն Քրիստոսին մերոյ, ընդ այս յոյժ եմք խընդացեալ և կատարեալ պարգևս զսա իսկ համարիմք, զի ժամանակեալ վշտօքս զանժամանակ երանութիւնս ժառանգեսցուք» (Եղիշե):

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց կառավարական մաղթանք՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 58-րդ տարեդարձին:

*
* *

Նոյեմբերի 29-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթը: Հավաքույթին Վեհափառ Հայրապետը խոսեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման 58-րդ տարեդարձի մասին՝ նշելով անցնող 58 տարիների ընթացքում հայ պետականության առկայության պայմաններում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների մասին, բոլոր բնագավառներում:

*
* *

Դեկտեմբերի 2-ին, շաբաթ.—Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Դեկտեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մանուկ քհն. Մարգարյանը և քարոզեց՝ «Որք առիք զպատուէր քարոզել աներկիւղ զբանն կենաց աշխարհի» շարականի բնաբանով, ներկայացնելով հայ եկեղեցու առաքելական ծագման պատմությունը և հայ ժողովրդի կյանքում կատարած նրա նախախնամական դերը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԵՂԱՐԴ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 31-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը ս. Գեղարդ վանքում, խարտավիլակությամբ տ. Եղիշե քհն. Սարգսյանի, քահանա ձեռնադրեց ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի առաջին շրջանավարտներից Գուրգեն սրկ. Մուրադյանին:

Եկեղեցում ծառայելու հետ միասին Գուրգեն սարկավագը ավարտել է նաև Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Նորընծա տ. Գուրգեն քահանան իր քառասունքը անցկացրել է ս. Գեղարդ վանքում:

Տ. Գուրգեն քահանան ծնվել է 1928 թվականին Էջմիածին քաղաքում: 1951-ին ավարտել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը և ձեռնադրվել սարկավագ:

Այսօր ս. Գեղարդ վանքում պաշտոնավարում են չորս լուսամիտ և հավատավոր քահանա հայրեր, որպես նույն վանքի միաբանության անդամներ՝ տ. Եղիշե քհն. Սարգսյանը (վանահայր), տ. Մովսես, տ. Գուրգեն և տ. Աթանաս քահանա հայրերը:

Չորս քահանա հայրերը ավարտել են ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը և ապա իրենց ուսումը կատարելագործել Երևանի պետական համալսարանի պատմական և բանասիրական ֆակուլտետներում: